

Մեր մատենագիրները դանազան անուններ կուտան այդ երգերուն, — զրոյցք, վէպք, վիպասանաց երգք, վիպասանութիւնք, առասպելք, երգ բանից, երգ թուեկաց: Բայց ինչ որ կը շեշտէ այդ երգերուն գործածութիւնը թատերական ցուցադրութեանց մէջ, այն միւս երկու անուններն են, որոնք կը տրուէին այդ երգերուն, — երգ ցոցոց եւ երգ պարուց: Խորենացին է, որ այդ անունները կը յիշէ, յայտնելով, որ հին դէպքերը կը պատմուին «ի նըւազս բամբոսն եւ յերզս ցոցոց եւ պարուց»:

«Յուցք» ինչպէս կը մեկնեն գրեթէ մեր բոլոր բանասէրները՝ կը նշանակէ տեսակ մը թատրոն, այսինքն՝ արտայայտութիւն շարժուածքներով: Դժբախտաբար, ուրիշ լրացուցիչ բացատրութիւն չենք գիտեր ոչ Խորենացիի եւ ոչ ալ ուրիշ մատենագիրներու մօտ «ցուցք» երու մասին, բայց տարակոյտէ վեր է, որ անոնք խաղեր էին՝ երգի եւ նուազի ընկերացած, ոչ թէ պարզ միջկատակներ (փանթօմիլ), ինչպէս կարծած են ոմանք:

«Երգ պարուց»ը պէտք է, մեր կարծիքով, տարբեր մեկնել քան ինչ որ մեկնաբանուած է ցարդ: Անոնք պարերգներ չէին՝ բառին արդիական իմաստովը: Անոնք աւելի մէկ մասն էին թատերական բեմադրութեան: Արդարեւ, թատրոնի պատմութենէն գիտենք, — ինչպէս տեսանք, — որ հին հելլենները ողբերգութեանց անբաժան մասը կը նկատէին պարը: Պարերգուները կամ պարերգակները յաճախ կ'ընդմիջէին բուն ողբերգութիւնը, երբ դերասանները կ'աւարտէին հատուած մը: Անոնք թէ՛ դադար կուտային դերասաններուն, եւ թէ՛ կը լրացընէին խաղը: Նոյնիսկ Հայաստանի մէջ, Բաղուրի հարսնիքին առթիւ ներկայացուած ողբերգութեան միջոցին, պարերգուներն են որ, ինչպէս տեսանք, կը միջամտեն խաղին, երբ դերասանը իր հատուածը կ'աւարտէ:

Մեր նիւթին անմիջական շրջանակէն դուրս կը մնայ քննել գողթան երգերու նիւթը, ժամանակը եւ արուեստը, որոնք եւս արժանի են առանձին ուսումնասիրութեան մը:

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ

Փաստերը ժլատ են նաեւ մեզի ցուցնելու այս «վիպասանութեանց» հեղինակները: Խորենացին իբր բանաստեղծ կը մատնանշէ միայն Արտաշէսի տղոցմէն մէկը՝ Վրոյրը, եւ հիմնուելով այդ ենթադրութեան վրայ, բանասէրները տրամադիր են Վրոյրը նկատելու նաեւ «գողթան երգեր»ու անուան տակ մեզ հասած վիպասանութեանց հեղինակ: Ուրիշ անուններ հազիւ թէ կը տրուին մատենագիրներու կողմէ:

Բայց մեր կարծիքով, գոնէ վերոյիշեալ վիպասանութեանց համար, անտեղի է ուրիշ հեղինակ որոնել: Ժողովուրդը ինքն էր անոնց հեղինակը. աւելի ճիշդը՝ դարերն էին, որ հիւսեցին այդ վիպասանութիւնները, հետզհետէ ամբողջութեան մը վերածելով դանոնք: Ու արդէն Խորենացին, որ մեծազոյն աւանդապահն է անոնց, «վիպասաններ» ընդհանուր բառով կ'որակէ այդ երգերուն հեղինակները: «Արտաշէսի վերջնոյ գործք բազում ինչ յայտնի են քեզ ի վիպասանացն որ պատմին ի Գողթան»: «Այս ամենայն յայտնի են քեզ յերզս վիպասանաց»: «Ձայս մեզ ստուգապէս պատմէ Ուլիւս... որում եւ պարսից մատեանքն վկայեն եւ երզն վիպասանաց»:

Ուրեմն «վիպասան» բառը տեսակ մը ընդհանուր տիտղոս էր այն երգիչներուն, որոնք միեւնոյն ատեն յօրինողներն էին իրենց երգած վիպասանութեանց, եւ թերեւս նաեւ անոնց բեմադրիչները, ինչպէս էին քրուվերները, քրուպատուրները, հագներգուները ուրիշ ազգերու մէջ:

«Գուսաններ», «երգիչներ», «բանաստեղծներ» ընդհանուր բառով եւս որակուած են առհասարակ այդ վիպասանները:

Յովսիաս, է. դարու մատենագիր մը, կ'աւանդէ թէ «բանաստեղծք» Բաղրատունի վարագոտիւրոց իշխանին գործերը կ'երգէին եւ զինքը փաղաքշանօք «Սպարապետ Հայոց» կ'անուանէին: (Ալիշան, Հայապատում, Ա. 154):

ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԸ

Տուեալներ չունինք հայկական թատրոնին դիմագծութիւնը տալու համար, ըլլայ շէնքի,